Փոխիջը ԵՒԹԱԹ օրերը կը նրատարակուի։

Տարեկան բաժանորդագինն է երիս ես կես արծաթ Մեճիտ կանխիկ վճարելի, թէ՛ մայրաքաղաքիս եւ իւր արուարձանաց եւ թէ՛ գաւառաց համար։

Վեց եւ երեք ամսոց համար ալ բաժանորդ կրնդունուի։

Հատը 40 փարայ է, եւ կը գտնուի մասնաւորապես Պանճ-Գաբուռ ջրավաճառ. եւ գրավաճառ Պօղոս եւ Յակոբ աղայից խանութները։

ԲՈՒԶԱՆԴ

Ծանուցման տողը 3 դուռուշ է մէկ անգամի համար։ Աւելի ամսոյ կրկայ աւելի անգամներու համար։

Խմբագրութեան վերաբերեալ որ եւ է գիր ուղղելի առ Տճօրհն-Տէր Հ. Ս. Ալատճատճեան կ. Պոլիս Գալըգ-բազար Նաճ-խան խան վերի յարկ թիւ 16։

ADRESSE
H. S. ALADJADJIAN
Directeur du journal Arménien Pountch
—16 Nafié-Han, Balouk-Pazar 16—
CONSTANTINOPLE

ԹԻՒ 2255 — ԵՒԹԱԹ — 1891 ՄԱՅԻՍ 18

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓՈԽՆԴԻ

Մեր դիտողութիւնը։ — Ազգին ներքին վիճակին ծանօթ եղող ամէն Հայ համոզուած է թէ՝ Ազգը ներքին բարեկարգութեանց պէտք ունի։ Ազգին վարչական ամէնուն վերայ գտնուղները համոզուած են թէ Ազգին ներքին վիճակը բարեկարգելու համար բանաւոր անհրաժեշտ անօրինութիւններ անհրաժեշտ են. սակայն ո՛ր և է բարեկարգութիւն եղած չէ և ամէն ինչ անկարգ և խառնիխուռն կընթանան։

Հարիւրաւոր վանքեր երկար ժամանակներէ հետէ նիւթական ու բարոյական անկարգութեան մէջ կը գտնուին դեռ, և մտնաւորապ չահուն ու հաճոյից դարձարաններ դարձած են։

Հարիւրաւոր դիւղեր առանց վարժարանի և եկեղեցւոյ լքեալ են, կամ անարժան ու տգէտ քահանայից ձեռքը խաղալիկ եղեր են։

Նախնական կրթութիւնը՝ վոխանակ ձրի և պարտաւորիչ լինելու՝ վճարմանց ենթարկեալ է։ Մայրաքաղաքիս թաղական վարժարանաց (արական և իգական) գրեթէ ամէնքն ալ լեզուագիտութեան յատկացեալ են։ Ազգային լեզուի, կրօնի և այլ նախնական կարևոր ուսմանց համար ըստ արժանւոյն խնամ չտարուիր, մինչդեռ հարկ անհրաժեշտ է որ թաղային մանկտւոյն համար ձրի և պարտաւորիչ լինին այդ ուսմունք, և օտար լեզու և այլն ուսուցանել ուղղ ծնողք միայն վճարել պարտաւորեալ լինին։

Քահանայից, թաղական խորհրդարանաց և նոյն իսկ Պատրիարքարանի դէմ ժողովրդեան մէջ գանգատները կընդհանրանան։ Ոմանց անգիտութեան առթիւ յանուն քահանայից, եկեղեցւոյ և Պատրիարքարանի վճարուած գումարները չատ են։ Ննջեցելոց յուղարկաւորութեան առթիւ յանուն քահանայից և եկեղեցւոյ տրուած գումարներն չափազանց են։ Դիւրութիւն տալ անհրաժեշտ է։ Արդի ընթացքը ժողովուրդը կը ցրտացունէ եկեղեցիէ և եկեղեցականութենէ։ Շա՛տ ծանր և անտանելի է, տան մը մէջ ննջեցեալ գտնուած ատեն, դարաւոր սովորութեան հակառակ, ննջեցեալն տէրն յուղարկաւորութեան ծախսուց համար ի տակարկութիւն կոչել, կանխաւ պահանջել կամ ապահովութիւն ուզելը։

Շատ ծանր են եկեղեցւոյ մէջ մեծի և փոքու, հարուստի և աղքատի, աստիճանաւորի և անաստիճանաւորի համար մեծամեծ խարութիւնները։ Ննջեցեալի մը վերև և չուրջը եկեղեցւոյ մէջ բազում մոմեր վառել, ամէն ծանրագին սպասներ յերևան հանել. իսկ ուրիշի մը համար քանի մը ճրագ և ցնցոտիներ հերիք համարիլ։

Շատ ծանր է նկատել որ քահանայք աղքատի կամ քիչ վճարողի մը ննջեցելոյն յուղարկաւորութեան մաղմանքները բերաննէրէն թափելով և չատպատ կարատանեն կամ կերգեն, իսկ չատ դրամ վճարողին ննջեցելոյն յուղարկաւորութեան համար բոլորովին հակառակ վարմանց մէջ կը գտնուին։ Այս խարութեանց, այս անհեթեթութեանց վերջ տալ պէտք է։

Շա՛տ է Պատրիարքարանի և թաղական խորհրդարանաց վկայագրութեանց, անձնագրութեանց, և այլն, պէտք ունեցողներէն առնուած դրամոց քանակութիւնը։ Զափաւորել հարկ է։ Բաղումք կը գանգատին, և հաշտ աչօք չեն նայիր Պատրիարքարանի և խորհրդարանաց վերայ։ Մուխթար և Բէհճա անուամբ թաղային պաշտօնակալաց համար կարդադրութիւններ անհրաժեշտ են։

Վերջապէս ներքին բարեկարգութեան համար մեծ խնամ և հոգածութիւն պէտք է։ Ազգային վարչական նախաթոռոյ վերայ գտնուղներուն անկ է այս կենսական և կարևորագոյն պէտքն հոգալ, և ներդաշնակութիւն մուծանել ազգային գործոց մէջ, առանց այլ ևս ժամանակ կորուսանելու։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ՓՈՒՆԴԻ

Բաբերդ. 5 Մայիս 1891։ — Ճիկրաշէն։ — Մեծն Ճորոխ՝ վոր մաս մը կարնոյ, մեծ մասը ըմպերի լեռներէն կը բղխի. և Մասթ անուն մեծ ձորին մէջ միացեալ՝ արևմտեան երկայնութեամբ չեղապատյա կուգայ ի Բաբերդ. քաղաքի գլուխն քառորդ ժամ ճանապարհ կը հարկանէ հիւսիսային ուղղութեամբ, և վայրկենական չրջան մը տալով յարեւելս կոյս, զանազան պըտայտներով կանցնի կերթայ հեռաւոր աշխարհներ։

Հզօր գետ՝ քաղաքն արևելեան և արևմտեան մասերու բաժնած է. արևելեան բաժնի հիւսիսային ծայրն է Ճիկրաշէն Հայ թաղը, որ վայրկենական չրջանի հարաւոյ մասը կը կազմէ. իսկ ատանգական բերդը, թաղին դիմացը՝ հիւսիսային եղերայ բլրոյ վրայ վաթսուն տարիներ առաջ Հոխորդանքի մը առթիւ աւերակեալ, տխուր տեսք մը կը ցցունէ ամպորդին։ Թաղը լերան մը զանվերն բաւական բարձրը տարածուած բնակութիւններ կրկազմի. ընդարձակ դերեզմանատուն մի՝ Տափերը անուն՝ արևելքէն, և Ճորն արևմտքէն սահմանն որոշած են կենդանեայ և մեռելոց. օդը առողջ, ջուրն մաքուր՝ համբաւաւոր Հաճի վէյսալ աղբիւրէն։ Դերեզմանք զարմանալի հնութիւն կընծայեն. արձանագրութիւններէ կը գուշակուի՝ որ Տափերն 1200 տարեայ վերջին բնակարանն է Համայն Բաբերդի համաքաղաքացի Հայոց։ Ճիկրաշէնի այժմեան բնակչաց մեծ մասը՝ վաղեմի եկ և պանդուխտ Հայերն են. նուիրական դրչագրաց յիշատակարանք ամեն տարակոյս կըբառնան. ձեռագիր Աւետարան մը՝ (Կիլիկեցւոց ժամանակ գրուած) 578 տարեայ. մեծ Ցայսմաւուրքն՝ 427. ընկուզենի փոքրիկ դուռ մը՝ 430. չրջաններուն մէջ անկորուստ պահած են այնպիսի անուններ, որ արդ տարօրինակ կը թուին մեզ. չկայ դերեզմանատուն մը ուր նշմար մնացած լինի այդ անուանց. արդէն տեղւոյս աղգայինք կը խոստովանին՝ ամանց յօտարութենէ ատ գալ բնականալն. հինաւուրց վարդապետ մը՝ զանազան պատկերօք և նկարուք կերտուած ճարատար ձեռամբ դերձակ Խաչատուրի՝ 190 տարի առաջ, և քանի մը յիշատակարանք, և Բաբերդի եպիսկոպոս Առաքնորդին ժամանակ որոշմամբ այրեցեալ (ոսկին առնելու համար) սքանչելի գեղակերտեալ չուրջառ մը կը լուսաբանեն թէ՝ վաղընդայ և Վահանչէն գիւղերէն (այժըմ Թուրքաբնակ) Հայք ցրուելով այժմեան Ճիկրաշէնցւոց միմեանց կազմելու սկիզբն ըրած են. Վաղընդայի սարկաւագի մը վերայ գրուածք մը կը գուշակուի՝ որ Վահանչէնի պատմական վանուց անօթք և գոյք սուրբք տեղւոյս Ս. Աստուածածնին եկեղեցւոյն յանձնուած են. այրեցեալ չուրջառը ոսկետառ գրուած ունի եղեր Վահանչէն անունը։ Հարկ չեմ համարիր յիշատակարաններն տալ ի հրատարակութիւն։ 578 տարի առաջ Կիլիկիոյ, Երզնկայի և Դերջանի անցքերուն վերայ դողն լոյս կընծայեն միայն. սովք, երաչտութիւնք և աւարառութիւնք տարինեռով տևած, գաղթակատնութիւնք և կոտորածք քաղցի երեսէն. իսկ Բաբերդի համար, ուշագրաւ է հաչակաւոր Մէմի օղլի և Փաչա օղլի գերդաստաններուն 95 տարի յառաջ կռիւն. և ամիս չարունակ պաշարման մէջ կը գտնուի Փաչա օղլին՝ Բաբերդի վարչապետը, բայց ի վերջոյ կը յաղթէ. Հայք և Թուրքք բաղում ջլասուեր են այդ երկու մեծ դերասանաց երեսէն։ Ա. յժմ Ճիկրաշէն ունի երեւելի ազգայիններ. հասարակութիւն մը աչխատասէր և հոս գործունեայ. թէպէտ ուսումնասէրք են, բայց ցաւելով կըսեմ թէ բաժանման խնդրոյն մէջ՝ քանի մը թեթևներու դէմ վշտանալով մեղանչելին։ Ինչպէս

Ծանուցման տողը 3 դուռուշ է մէկ անգամի համար։ Աւելի ամսոյ կրկայ աւելի անգամներու համար։

Խմբագրութեան վերաբերեալ որ եւ է գիր ուղղելի առ Տճօրհն-Տէր Հ. Ս. Ալատճատճեան կ. Պոլիս Գալըգ-բազար Նաճ-խան խան վերի յարկ թիւ 16։

ADRESSE
H. S. ALADJADJIAN
Directeur du journal Arménien Pountch
—16 Nafié-Han, Balouk-Pazar 16—
CONSTANTINOPLE

ԹԻՒ 2255 — ԵՒԹԱԹ — 1891 ՄԱՅԻՍ 18

բոլոր թաղերու, նոյնպէս և տեղւոյս կանայք բարեսէր, հոգեսէր ու եկեղեցասէր են. իրենց եկեղեցասիրութիւնն է որ ղիպական առեն ստիպեր է մղուիլ ի գործադրութիւն բաժանման։ Ճիկրաշէնն՝ իւր լաւ կողմերն ունենալով հանդերձ, յոռի կէտ մ՛ալ ունի, որուն համար երիզայի բարեկամս Գրիգոր Թիրաքեան գաւիչատարար ըսաւ, «եթէ սատոյգ ժամանակ լինի, Ճէկրաշէնի գաղիվայրէն արագ կիջնամ ի Ճորոխ» այսինքն քարափոր և երբեմն ապառաժուտ խոչընդոտներ ըլլալով ճանապարհայ վերայ, հարկ է որ փողոցները սալայատակով յարդարեն. և ահա յայժամ կը համապատասխանէ Ճիկրաշէնի օդոյն և ջրոյն։ — Դպիր

Կիւրին. 18 Ապրիլ 1891։ — Ճառտարարուեաս վարագոյր ունի։ — Բնիկ Մարաչցի Կ. օղլի Գարապետեան Յարութիւն, կրօնասէր անձն, գրեթէ 25 տարի յառաջ քաղաքս գաղթելով հանդերձ ընտանեօքն՝ ներկարարութեան գործարան մի բացած, երկար ժամանակ յարատեւած նոյն գործին մէջ, և հաղիւ կարողացած է վերջապէս ընտանեաց օրապահիկն հայթայթելու, և ահա դիպուածով մը աչքերն կուրանալով, յետին չքաւորութեան և թշուառութեան մէջ հարկադրուած է մուրացութեամբ ճարել իւր և մէկ քանի դեռատի որդւոց պարէնն։ Հուսկ ուրեմն հեռատեսելով որ հետզհետէ պիտի բազմանան վիշտերն և ցաւերն, իւր ծերութեան մէջ վերադարձած է հայրենիքն։ Ա. յլ ևս յայտնի չէ մեզ թէ՝ դարձեալ բնակութիւն հաստատած է թէ ո՛չ։ Եղեսիա գաղթած ատենն իւր զաւկըներ այլ և այլ գործերու յատկացնելով յառաջացուցած է զայնըս ըստ արժանւոյն, և հիւանդութեանն ժամանակ կատկած է իւր յառաջդիմասէր որդւոց, որպէս զի ինչան երախտապարտութեան բարեաց և ողորմութեանց, զորս ընդունեց կիւրընէ, յատկապէս երկայնութիւնն և լայնութիւնն խմանալով՝ վարագոյր մի նուիրեն քաղաքիս մայր եկեղեցւոյ աւագ խորանին։ Ըստ այդ կտակի, որդիքն՝ Սարգիս Վարդուհառ, Յովսէփ, Ննանիա և Յարութիւն աղայք, անցեալ տարի յանձնարարելով խորանին երկայնութիւնն և լայնութիւնն, այս անգամ տեղւոյն Տ. Պօղոս քահանայի գործադրութեամբ և Մարաչեան գործարանի մէջ պատրաստած դեղեցկագոյն և վայելուչ վարագոյր մի նուիրեցին, և պրկուելով աւագ հինգշաբթի օրն վայելչապէս կախուիցաւ աւագ խորանին մայր եկեղեցւոյ։ Վարագոյրն բովանդակ ժողովրդեան և այլոց ուշն գինքն գրաւեց, վարպետորէն բովանդակած է Յիսուսի Ննդեան, մկրտութեան, խաչելութեան և յարութեան գեղեցիկ և սիրուն պատկերներն. Ննդեանն՝ փոքրիկ դիրքով. իսկ միւս երեքըն՝ մեծ դիրքով. չրջապատուած է նաև երկոտասան առաքելոց պատկերներով և անուններով. գործ մը՝ արժանի յիշատակաց, անմոռանալի և օրինակելի։ Ահա հրապարակաւ ևս չնորհակալութիւն կըմատուցանեմք բարեպաշտ նուիրատուաց։ Տ. Ա.

Մարզուան. 23 Ապրիլ 1891։ — Բերեվիտեանեան։ — Բաղաքիս երեւելիներէ Բերէմիտճեան դերդաստանը մեծ և կարևոր կորուստ մ՛ունեցաւ, յանձին Մ. Գէորգ էֆէնտի Բերէմիտճեանի։ Կրտսեր որդի Մ. Յակոբ աղա Բերէմիտճեանի. յետ երկարատև հիւանդութեան՝ ամսոյս 18ին աւագ հինգշաբթի երեկոյ կնքեց մահկանացուն՝ իւսուգ հառակելով իւր ամբողջ բարեկամներն և սիրելիները։ Մ. Գէորգ էֆէնտի իւր ազնիւ բնաւորութեամբ պատիւն կառաւելոյր արդարև քաղաքիս հայ երիտասարդութեան և իւր գերդաստանի։ Դպրոցական բարեյաջող կրթութիւն մը ստանալէ վկին, իրաւունք և արդարութիւն նչանաբան ունենալով, այն ինչ թևատկոծած էր ի վաճառականական ասպարէզ, անդորմ հիւանդութիւն մը անմիջապէս վրայ հասնելով՝ երկար ժամանակ անկողնոյ մէջ տառապեցոյց խեղճն, և հաղիւ թէ տան և ինը գարունները պակասին իւր ճակատ, մահուան սարսուռն զգաց, և ահա ղերթ ծաղիկ նորափթթիթ, թառամեցաւ անագան դեռ չճաշակած կենաց զեփիւռը. սակայն բնական է որ երբ կը թառամի ծաղիկը, իւր հետ կը թողու քաղցրը բոյր մը. այսպէս նաև Գէորգ էֆէնտի արդարասիրութեան և պարկեշտութեան օրինակելի յիշատակ մը թողով իւր հետ՝ կը փակէ կենաց չրջանը։ Ա. յս կանխահաս մահուան առթիւ իւ խոր սուգ խոցեալ են իւր ամբողջ պարագայքն, որոց վասն կը հայցեմ երկնային մխիթարութիւն և բարեբաստիկ երկայնակեցութիւն։

Զարեհ

Տրապիզոն. 4 Մայիս 1891։ — Գարնանային եղանակը տակաւին զով և պաղ է ատ։ Ժողովրդեան մէջ բաւական հիւանդութիւն կայ։ 4–5 աւուրց մէջ երեք երիտասարդաց յուղարկաւորութեան ախուր հանդիսին ներկայ գըտնըուելու դժբաղդութիւնն ունեցայ։ Ալիւրին լիտրը 8 պղչ է. եգիպտացորենի քաշը 50 փարայ. միսն 3–5 պղուչ. և այլք՝ ըստ այսմ կարգի։ Յայսմդ առթիւ երկարօրէն պիտի գրեմ։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Տրապիզոնէ նորեկ ուղևոր մը՝ տեղւոյն ազգային եկեղեցւոյ վերաշինութեան ի նպաստ հանգանակութեան համար մեր հրատարակած տեղեկութիւնները դժբաղդաբար վերիվայր կը յեղաշրջէ տարբեր ծանօթութեամբ։ Գրած էինք թէ հանգանակութեան դուռարն քիչ ժամանակի մէջ 2500 լիրա եղած է և ոչ ոք 15 ոսկիէ պակաս դուռարով մասնակցած է։ Ուղևորը ծանօթութիւն կուտայ մեզ թէ տակաւին 1500 լիրա ստորագրուած են, և մինչև 1 ոսկիի ստորագրութիւն կայ, և յոյս չկայ որ աւելի լինի հանգանակութեան դուռարն, քանի որ ի սկզբան տեսնուած վոյլին ու եռանդը չտեսնուիր և քանի որ առաջնորդական փոխանորդն Յարութեան ոտնէ անմիջապէս եռքը եկաւ չրջադայիլ թեմերն, ուր առ այժմ կարևոր գործ մը չունի։ Կը յաւելու ուղևորն թէ քանի մը անանգամ այսպէս հանգանակութիւն բացուած է խարխուլ եկեղեցւոյն վերաշինութեան համար, սակայն չարունակութիւն չլինելով՝ բարձի թողի եղած է։ Յաւելով լսեցինք այս և այլ ծանօթութիւններ, որով վարժարանաց վիճակն ալ գոհացուցիչ համարիլ կարելի չէ, և հետևաբար հարկ անհրաժեշտ է առաջնորդական ընտրութեան գործը փութացունելու հրահանգ ղրկիլ ի Տրապիզոն, յորդորելով որ արժանաւոր եկեղեցական մը ընտրեն. եկեղեցական՝ն մը՝ որ, չահադիտութենէ հեռի լինելով՝ փոյթ տանի իւր պաշտօնն ու պարտաւորութիւններն անկեղծութեամբ կատարելու համար, ազգասիրութեամբ պատուարժան ազգայնոց վիճակին։

— Զորեքշ. Ս. Գէորգ եկեղեցւոյ քահանայներէն փոխառաջնորդ Արժ. Տ. Վարդան Պաղտասարեան, երկուշաբթի առաւօտ մայրաքաղաքս եկաւ ի տես Ծնողացն և ամսոյ մը չափ ժամանակ պիտի մնայ։ Սոյն գիւղաքաղաքի նորակառոյց վարժարանի բացման հանդէսը կատարուելու ամսոյս 6ին ի ներկայութեան այցելու հովուին և բարեզարդ ուխտաւորաց Ռոտոսթոյի, որք ըստ սովորութեան ամէն տարի եկեղեցւոյն ծանօթութեան առթիւ կը համախմբին անդ։ Ուրախ եմք իմանալով որ Արժ. Պաղտասարեան սոյն գիւղաքաղաքի եկեղեցւոյ վերայ քահանայ ձեռնադրուելէ հետէ մեծ փոյթ տարած է և կը տանի տեղւոյն ազգայնոց կրթական յառաջադիմութեան և հոգևոր պիտոյից համար։

— Կը լսենք թէ՝ Ռոտոսթոյի այցելու հովիւ Տ. Հմայեակ եպիսկոպոս մօտերս մայրաքաղաքս կուգայ, և որոշած է հրաժարիլ և չվերադառնալ։

— Ինչպէս նախորդ թերթով ծանուցած էինք՝ հինգշաբթի ե. թը եկեղեցական երեսփոխանաց ընտրութեան համար քուէարկութիւն և քուէհամար եղաւ Պատրիարքարանի մէջ կրօնական ժողովէն կարգեալ յանձնաժողովոյ հսկողութեամբ։ 91 եկեղեցականք մասնակցեցան ընտրութեան՝ անձամբ կամ նամակաւ։ Քուէհամարը կատարուելով որոշեալ ժամանակին, տեսնուեցաւ որ բացարձակ առաւելութեամբ ընտրուած են Տ. Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան՝ 72 քուէով, Տ. Գէորգ Ե. վարդապետ Իւթիճեան՝ 69, Տ. Յովհաննէս Ե. վարդապետ Արշարունի՝ 66, և Տ. Արիստակէս քահանայ Զիլզիճեան՝ 53։ Հետևաբար հարկ եղաւ ըստ օրինի համեմատական ընտրութիւն կատարել երկրորդ անգամ՝ երեք եկեղեցական երեսփոխանաց համար առաւելագոյն քուէ ստացողներու երկպատիկ ցանկի վերայ, որ է՝ Տ. Վահան վարդապետ Յակոբեան, Տ. Մովսէս վարդապետ Կէօմրիւքճեան, Տ. Եղիշէ Ա. ւագ քահանայ Սէրքէնեան, Տ. Խորէն Ա. ւագ քահանայ Փէհլիվանեան, Տ. Յովհաննէս քահանայ Շահպազեան և Տ. Վահան քահանայ Գրիգորեան։

— Հանգուցեալ Հայրապետին սպասաւոր Մ. Յակոբ և այլ քանի մը անձինք դեռ զատ զատ բանտարկեալ և հարցաքննութեան ենթարկեալ են։ Երեսան հանուելն են բաղում ոսկի, արծաթ և ծանրագին բաներ. խաչ, եպիսկոպոսական մատանի, կամ ծողակոսական մուշտակ, և այլն։ Առ այժմ կը կարծուի թէ 30000 րուպլիի կորուստ կայ։ Կըսուի թէ Մ. Յակոբ և այլ ոմանք Հայրապետին վախճանումն գաղտնի պահեր են քանի մը ժամ՝ իւրեանց աւարառութեան դործն ի գլուխ տանելու համար։ Կաթողիկոսութեան ընտրութեան ժամանակը դեռ որոշուած է։ Ըստ ոմանց՝ առաջիկայ Սեպտեմբեր ամսոյ մէջ, և ըստ այլոց՝ առաջիկայ տարւոյ Ապրիլի մէջ տեղի պիտի ունենայ։ Հարկաւ մօտերս կերևի Սինոդին պաշտօնական յայտարարութիւնը։

— Ձավա կղզւոյ (Բատաւիա, ընդ իշխանութեամբ Հոլանտիոյ) աղգայիններէն չորս հոգի, նշանաւոր վաճառականք՝ երուսաղէմ ուխտի վերադառնալով մայրաքաղաքս, անցեալ չաբաթ օր այցելեցին առ պատրիարքական Դիւր. Փոխանորդն, աղօթեցին Մայր-եկեղեցւոյ մէջ և պտըտեցան մայր վարժարանը։

— Խառն ժողովը՝ որ կրօնական ժողովոյ անդամներէն Յակոբեան Արժ. Տ. Վահան վարդապետն Տիարպէքիրի առաջնորդական տեղապահ կարգած էր, ի վերջոյ պատշաճ դատեց այդ պաշտօնն յանձնել դարձեալ Փափազեան Արժ. Տ. Յովհաննէս վարդապետի, և հետևաբար որ փութով առաջնորդական ընտրութիւն կատարել տայ։

— Կրօնական ժողովը այս չաբաթու ալ չկրցաւ նիստ ընել՝ անդամոց մեծ մասին բացակայութեան պատճառաւ։

— Հաճութեամբ կը ծանուցանենք թէ՝ կայսերական կառավարութիւնը չորրորդ աստիճանի Մէճիտիէյէ պատուանշան շնորհեց Պուլսայի առաջնորդական տեղապահ Արժ. Տ. Սրիստակէս Ե. վարդապետի Վանքեան, որ բանիբուն և գործունեայ եկեղեցականն մ՚է։

— Ուրախութեամբ իմացանք որ Զմիւռնիոյ Հռիփսիմեանց վարժարանի նախկին սանուհեաց ոմանք Որբանոցի համար Ողորմելի անուամբ ընկերութիւն մը կազմեր են՝ Որբանոց մը հիմնելով, ազգասիրական աղջիկնե-

րը գաստիարակելու և նեղեալ դասակարգին, հիւանդանոցի և այլն, հոգալու դիտաւորութեամբ։

— Մշոյ գաւառական ընդհանուր ժողովը, համաձայնութեամբ որոշեր է եպիսկոպոսական վկայագիր խնդրել կեդրոնական վարչութենէն՝ Մշոյ Վահագայր-Աւագնորդ Դեր. Խորանեանի համար։ Գաւառական ընդհանուր ժողովոյ այս որոշումն ալ ապացոյց է թէ Նորին Գերապատուութիւնը սրտի և խղճի մտօք կը կատարէ Մշոյ վանահայրութեան և առաջնորդութեան միացեալ պաշտօններն, և Ս. Կարապետ վանուց միաբանից ոմանց դանգատներն անլսելի են և մեղադրելի ապաքէն, որպէս դիտած էինք քանի մը չաբաթ յառաջ։

— Եգիպտոսի Խեդիվ պատուանշան ընծայեր է Եգիպտոսի նախկին նախարարապետ Նուպար փաշայի որդի Վահեմփայլ Պօղոս փաշայի։

— Կեսարիոյ Լվերեկ գիւղի մէջ քանի մը տարի յառաջ գործուածքի մը պատճառաւ ի հառաջականութիւն յարեալ 20 ի չափ Հայ ընտանեաց 19ը այս օրերս վերադարձեր են ի մայրենի եկեղեցի իւրեանց, և հետևաբար հոգևական վարդապետն՝ առնելով տարած ղանգակն և այլն, ի Կեսարիա վերադարձեր է։

— Դավրէժէն հեռագրեր են առ լրագիրս Տփղիսի թէ՝ Մայիսի 3ին, հինգ պապական ասորիք Դավրէժի մերձակայ տեղ մը բռնաննեցին Փափազեան Մեսրոպ վարդապետն և նորա սպասաւորը։

— Ազգային Սահմանադրութեան 31դ տարեդարձի հանդէսը պիտի կատարուի ամսոյս 26ին կիւրակէ օրը, ըստ բազմամեայ սովորութեան՝ Հիւանդանոցի դիմացի պարտիզին մէջ։ Պատասխանատու հոգաբարձութիւնն յատուկ մասնախմբի մը միջոցաւ պէտք եղած կարդադրութիւնները կընէ հանդիսին չքեղութեան և հանդիսականաց հանգստեան համար։

— Արտաքին գործոց նախարարի խորհրդականի օդնական Զայեան Իլիաս էֆէնտիի եղբայրն՝ Յակոբ էֆէնտի երեքշաբթի ի Սոֆիա կնքեց մահկանացուն։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հինգշաբթի սկսաւ երից կայսրորդւոց թլփատութեան հանդէսը, և այս առթիւ՝ հոյլարաւոր մանկանց թլփատութիւնն, շնորհիւ Նորին կայսերական վեհափառութեան։ Մինչև առաջիկայ երկուշաբթի երեկոյ պիտի տեւէ այս հանդէսն։ Հինգշաբթի առաւօտ թլփատեցան կայսրորդիք, և ապա մեծ եպարքոսն, սպարապետ, պետական խորհրդոյ նախագահի, ծովային ու արտաքին գործոց նախարարաց և այլ բարձրաստիճան պաշտօնատարաց որդիք։ Նուագածութիւնք, տեսակ տեսակ խաղեր և այլ խրախճանութիւնք կատարուեցան, և հանդիսաւոր բարեմաղթութիւնք եղան Օգոստ. Սուլթանի համար։ Նոյն օրը նախարարք և բարձրագոյն կարգի պաշտօնատարք կայսերական պալատը դնացին ի շնորհաւորութիւն, և ճաշն ու ընթրիքն պալատան մէջ ըրին։ Կայսերական հրամանաւ՝ կերակուրներ և անուշեղէններ բաշխուեցան համային օրթայ, և զինուորական վարժարանաց ուսանողաց, և հազուստ՝ կոշիկ՝ գուլպայ՝ ֆէս՝ դրամական պարգև՝ թլփատելոյ։ Գիշերը գեղեցիկ լուսազարդեալ էին թլփատութեան տեղերը։

— Բուլղարէ կազմելի Համիտիէ հնձեղագնդի պատկանող Հայաբերանը, Շեքաբլը, Զիլիկի և Սամանդը Աշիրէթներու սեղապետներէն 60 հոգի հինգշաբթի մայրաքաղաքս ժամանեցին Տրապիզոնէ։ Նաւարանին մէկ չոգենաւին Գէչիկիմէշի նաւամատոյցն հանուց հնձեղագնդին յատուկ ձիերով և առաջնորդութեամբ նուագածուաց և զօրաց նոյն գնդին դնացին իշան Երզրումի պալատան չրջակայքը որոշեալ տեղն, և երեկոյին այդ տեղին առջև չարունելով՝ երիցս «Փառիշահըմ չօգ եաշա» ազաղակեցին։ Երեկ նոյեան ուրբաթու աղօթից հանդիսին։ Հրամայեալ է՝ ըստ ամենայնի լինամ տանիլ սոցա հանգստեան համար։ Առանցմէ յառաջ կ. Պոլիս եկող և վերադարձող սպայք իւրեանց տեղերն հասնելէն անմիջապէս եռքը չնորհակալութեան հեռագիր ուղղեր են ի կայսերական պալատն, յայտնելով թէ երբեք չդիտեր մոռանան այն մեծ չնորհներն, զոր վայելեցին լիուլի։

— Ռուսիոյ կայսեր երկրորդ որդի Կիւրկիյ մեծ դաչան հինգշաբթի առաւօտ մայրաքաղաքս եկաւ։ Ռուսական դեսպանն, կայսերական թիկնապահ Ա.հմէտ Ալի փաշա՝ մինչև Տարտանէլ, և մայրաքաղաքիս ռուս երևելիք մինչև Ա.յիսթէֆանօ ընդառաջ գնացած էին։ Ամիրալ Քորնիլոֆ մարտանաւն՝ որով եկած է մեծ Դուքսն, երբ կ. Պոլիս հասնելով խարսխեց Տօլմապաղչէի առջև, նաւահանգստին մէջ գտնուող ռուսական չոգենաւն, օսմանեան պահականաւն և անդղիական Պրիթանիա չոգենաւն դրօշազարդեալ էին։ Ռուսական դեսպանատան և հիւպատոսարանի գլխաւոր պաշտօնեայք՝ համազդեստաւք՝ մարտանաւն գնացին. ապա արտաքին գործոց նախարար Սաիտ փաշա, պալատան արարողակարգ Մխիթար փաշա և կայսերական թիկնապահապետք մարտանաւն երթալով՝ դեսպանին առաջնորդութեամբ ներկայացան մեծ Դքսին, և բարի գալստեան մաղթեցին ի գիմաց Նորին Վեհափառութեան, և մեծ Դուքսը շնորհակալութիւն յայտնեց իրեն եղած մեծարանաց համար։ Ա.ջ ներկայացման առեն կը նուագէր մարտանաւուն նուագախումբն։ Յաջորդ Ս. Պատարագին կողմանէ ալ նոյն օրը երեկոյեան դէմ պատշամաւորք մարտանաւն եկան առ ի շնորհաւորութիւն։ Մեծ Դուքսը երէկ օրէն եռքը կայսերական թիկնապահ Ա.հմէտ Ալի փաշայի և հաղարապետ Շէֆգի պէյի՝ որ հիւրամեծար կարգեալ են, և դեսպանին հետ չոգենաւակով Տոլմապաղչէ եկաւ, անտի պալատական կառօք կ. Պոլիս անցնելով՝ չրջեցաւ Թովգափուի պալատն, թանգարանը և նշանաւոր մզկիթներն, և իր պարագայիք վերադարձաւ ի մարտանաւն։ Երէկ ուրբաթ աղօթից հանդէսը տեսնելէն եռքը՝ Օգոստ. Սուլթանին ներկայացաւ և արժանաւորել մեծարանօք ընդունուեցաւ։ Երեկոյին փառաւոր խնճոյք տուեցաւ ի պատիւ նորին Բարձրութեան։ Նորին Վեհափառութիւնը հինգշաբթի դիշեր ալ յատկապէս խորհրդին ու մերգեր ղրկեց ի մատուռն։ Շքեղ չոգենաւակ մը և պալատական ընտիր կառքեր յատկացեալ են Գալքին համար։ — Ամիրալ Քորնիլոֆ առաջին աստիճանի մարտանաւ մ՚է, եռակայմ և երկմխելոյզ. 5000 ձիանոյի ատրոզութիւն և մէկ ժամու մէջ 18 մղոն ընթացից արագութիւն ունի. դինեալ է 14 մեծ և 16 փոքր թնդանօթներով. նաւազից թիւն է 500։

— Ըստ որոշման ընդհանուր ժողովոյ երկրագործական Դպրոցաան, այսուհետև ամսաթոշակ պիտի վճարուի յիշեալ դպրոցաան անտուկներուն վարչութեան նախագահոյ ու անդամոց, ըստ հաստիքին 100 ին 10 ին համեմատութեամբ։

— Անգղիացի դրամատէրներէ բաղկացեալ ընկերութեան մը կազմանէ արտօնութիւն կը խնդրուի՝ Աատրազարէն Պոլու, Զաֆրանպոլու և Գասթամունի երկաթուղի չինելու համար։

— Մայրաքաղաքիս գերմանական դեսպանին կինն ու դուստրն՝ որ ժամանակէ մը հետէ Պերլին կը գտնուէին, դարձան։

— Մնանկացեալ են ի Գալաթիա Մահմուտիյէ փողոց վաճառական Շամտանճեան Խաչիկ, ի կ. Պոլիս Մահմուտ փաշա Բիւրքճի Խանի դիմացը մուշտակավաճառ Անտոթաս և ընկերն Մարգոս Սավէրիէրս, կ. Պոլիս Մեծ Շուկայի վաճառական Պողոս էֆէնտի Փէչտիմալճեան։

— կ. Պոլիս Ազիր էֆէնտի խանը վաճառական Տ. Պ. Զէրչեան եղբարք ալ մնանկացեր են 7000 լիրա պարտքով։

— Շէյխուլիսլամ Խօճէը Լութֆի էֆէնտիի Թոռն՝ որ ժամանակէ մը հետէ հիւանդ էր, մեռաւ և երեքշաբթի յուղարկաւորեցաւ ճախլիք կայսերական անձնական դանձու։

— Զօհրապ Միհրան էֆէնտի չատ թեթև փէս մը հնարեր, և յաջողեր է հնգետասանամեայ արտօնագիր ստանալ։

— Կըսուի թէ՝ մայրաքաղաքիս պարսկական նախորդ դեսպան Միրզայ Մոհսին Խան՝ որ դեռ ի կ. Պոլիս կը գտնուի, Պարսկաստանի ներքին գործոց նախարար պիտի անուանի, և թէ կրնայ հեռագրուեր է առ ինքն՝ որ մինչև 3 ամիս կարգադրէ գործերն և դառնայ անդին նոր պաշտօնին գլուխը։

— Օգոստ. Սուլթանն իմանալով որ Կէլիպոլուի Գուլայըը գաւառակի ժողովուրդն տարաձայնութեան անձկութեան մէջ է արմտեաց նուազութեան պատճառաւ, իր թիկնապահներէն Մուղֆիէր պէյը վութացոյց առ ի տեղեկացութիւն։

— Ի փարիզ ընկերութիւն մը կը հաստատուի՝ Պարսկաստանէ թէհնպէրի գնելու և Թուրքիոյ մէջ վաճառելու համար։ Օսմանեան Պանքան մեծ մասն պիտի ունենայ այս գործին մէջ։

— Սիմրղանի և Պուխարայի կողմերէն եկող բաղմաթիւ ուխտաւորք երէկ յատկապէս Համիտիէ մզկիթն գնացին աղօթելին, նորին կայսերական Վեհափառութիւնը տեսնելու և աղօթակից լինելու տենչանօք։

— Օսմանեան Պանքայի բաժնետէրերու ընդհանուր ժողովը նիստ կընէ առաջիկայ Յունիս ամսոյ 13ին։ Կըսուի թէ 17 ֆրանք և 75 սանթիմ տարեկան շահ պիտի արուի բաժին կըլլա։

— Պրուսայի Պալըդճը Թաղէոս անուն անձն՝ որ երկրորդ անգամ վախած էր բանտէն, ի Գալաթիա բռնուեր է, բայց վիրաւորեալ. որովհետև ի պէն դիմելով վիրաւորեր է ոստիկան մը, և հետևաբար պէնք դործածուեր է իր դեմ ալ։

— Սթավրօ Մուլի անուն անձ՝ որ և տարի յառաջ դրքանչն սպաննած և մարմինն յօշոտած ու ինքն անհետացած էր, այս օրերս Իսկիւտարի մէջ բռնուեր է։

— Թիրէեցի Պէքիր օղլու Մէհմէտ ի Հռոդոս բերդարգելութեան դատապարտեցաւ՝ անպատշաճ խօսքեր արտասանելուն համար։

— Դաղատիոյ Տորթոդա գիւղի բնակիչներէն Խալիլ՝ որ 3 տարի յառաջ կինը կայնով սպաննած փախած էր, երկուշաբթի կ. Պոլսոյ Պալատ Լիման մէջ ձերբակալեցաւ։

— Ատանայի Իտարէի ժողովին որոշեր է Դողան գաւառի Հաճըն գաւառակի մէջ բնակեցնել՝ ինչ գանուող 200 էն աւելի Կովկասցի գաղթական ընտանիքներն։

— Արևելեան-Րումելիի սահմանագլխին մերձակայ Մուսթաֆա-փաշայի մէջ երկու օր յառաջ խոշոր կարկուտ տեղալով՝ չորս տասի չափ բարձրութեամբ դիզուեր և այդիներուն վնասեր է։ Նոյն օրը Զէրմէնի, Պուլտուրի և Խարտաղճի կողմերն ալ յորդառատ անձրևներ տեղացեր են, բայց անվնաս մնացեր են հունձք։

— Սէլանիկի Բէյլիք դիւղի Մուխթարն և երկու դիւղացի դիշեր ատեն լճէն հանելով աւազակը, ապա երկու դիւղացին արձակեր են որ երթան 800 լիրա բերեն Մուխթարին վերկութեան համար։ Դիւղին մէջ մէկ երկու օր աշխատելով 800 լիրա դտեր տարեր են աւազակաց, բայց նոքա դոհ չլինելով՝ 1000 լիրա պահանջեր են։ Մուխթարին ընտանիքն աղքատ են և այդչափ դրամ վճարելու անկարութեան մէջ կրդանուին եղեր։

— Եէմէնի նահանգի Հիւսէյտա քաղաքի մէջ հրդեհ պատահելով՝ 150 տուն այրեր են։

— Գանեայի Նեվչեհր քաղաքի Պաղչէ-մահալլէսի ըսուած թաղին գեռինն ժամանակէ մը հետէ տասիճանաբար ճեղքուելով՝ 60 էն աւելի տուներ ճաքաուեր և վրկիլ սկսեր են։ Շրջակայ բնակարանք պարպուեր, և կարօտ ճաքաելոց օգնութեան համար յանձնաժողով մը դրուեր է։ Ս.յս վիճակին պատճառ կը համարուին նոյն տեղէն անցնող ջրուղիք, կամ կը կարծուի թէ գետինը կը կթի։

— Ադրիանուպոլսոյ մէջ, ամսոյս 13ին, կուսակալը՝ պաշտօնատարք՝ զինուորք՝ ժողովուրդն և դպրոցականք յատկապէս անձրևի համար աղօթեր են, և ոչ-մահմեդական հասարակութեանց ալ պատուիրեր է նոյնն ընել։

— Կրետէի Սֆաքիա գաւառի Բալէօլուխրա գիւղի չրկակայրն պահապան գինուորք եօթն գինեակ անձանց պատահելով և տեսնելով որ ի պէն կը դիմեն, իրենք ալ պէնք առեր, և եօթնիկ մին՝ եօթնի՝ ձերբակալեր է վիրաւորեալ։

— Պրուսայի նահանգի մէջ արմտիք և չերամաբուծութիւնն այս տարի գոհացուցիչ վիճակի մէջ կերևին։

Պատրաստեցան, Ատրճան, Պաշտօն հն Պարգեւ։ — Պալըայի աստիճան՝ պատասան քարտուղարներէն Բեսպիմ պէյ։ — Ճանիկի գաւառի կառավարիչ անուանեցաւ Ճավիտ վարչական անուանեցաւ Ճավիտ վարչական, վերանաև Մուհիէտտին փաշային՝ որ Իչիլի կառավարիչ անուանեցաւ։ — Գաղատիոյ Լիվանօ գաւառակի գայմագամ կարգեցաւ Բայիֆ էֆէնտի։ — Մչոյ Նահիտ անուանեցաւ Խալիլ Հատա էֆէնտի։ — Երզորդ աստիճանի Շէֆգաթի պատուանշան՝ Զմիւռնիոյ Բանտուճիի պատուանշան՝ Մուհիէտտին պէյին կինոջ։ — Կրետական ոսկի շքադրամ՝ Կրետէի փոխկուսակալ Ճէվատ փաշային, Գանտիոյ կառավարիչ Ապտիւլքէրիմ փաշային և Մէջլիսուլքէֆի։ — Կրետական արծաթի շքադրամ՝ Կրետէի կուսակալութեան խորհրդական Ճօրճի փաշային, և 102 պաշտօնէից և 37 նշանաւոր բնակչաց կղզւոյն։ — Վանայ կէվար գաւառակի գայմագամ կարգեցաւ Կարճկանի գայմագամ Մուսթաֆա էֆէնտի, և Կարճկանի գայմագամ անուանեցաւ Մէհմէտ պէյ, որ երթայ ի Չէյթուն կը դանուէր։ — Իսկիւտարի կառավարիչ անուանեցաւ վճռարեկատենի պաղերատրոյ դիւանի անդամ Սապրի էֆէնտի՝ Իւզայի առաջին աստիճանաև։ — Տիարպէքիրի ձէվիրէ գաւառակի գայմագամ անուանեցաւ Խալիլ Բասիմ էֆէնտի։ — Հինգերորդ աստիճանի Մէճիտիյէ՝ մայրաքաղքիս ամերիկեան դեսպանատան Դալաս Մէհմէտի։

ԴՐԱՄԱԿԱՆ

կ. Պոլիս 18 Մայիս 1891

Օսմանեան ֆոնտօլիտէ . . .	19-39
Րումելիի երկաթուղի . Ֆրանք	72-
Թրամուէյ	Լ. 0 . 575-

Օսմանեան լիրան 100 դրուշէն

Մէճիտիյէ	108- 4
Մէճտիւիէ	101-
Հինդնոց	103-10
Վեցնոց	103-
Րուպի Թղթադրամ . .	7-70
Թասֆիկէ	18-
Ռուսիոյ Րուլ	90-10
Դաղղիական լիրա . . .	87-25
Անգղիական »	110-15
Գրմիչ	51-10

Ա Զ Դ

Լրագրոյս թերթերն, ի սկզբանէ մինչև ցարդ, տարուէ տարի ամփոփուած կազմուած, կը վաճառին ի գրասենեակի լրագրոյս. կ. Պոլիս՝ Պալըգ-պազար՝ Նաֆիյէ Խանի վերի յարկ Թ. 16։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Ռումանիոյ Կարոլոս թագաւորի դահակալութեան քառորդարեան տարեդարձի առթիւ, նորա փոխարքայ Պուքարէստ ինչ ընդունելութեան պատրաստուելու համար Ռումանիոյ կառավարութիւնն ղեկուխիւններ կը հրատարակուին։ Երկրին արտաժմունք 25 տարի յառաջ 150 միլիոն ֆրանք էին. արդ 300 միլիոն ֆրանք են, և 3000 քիլոմեթր երկաթուղի չինուած է, ի բաց առեալ երկաթեայ հոյակապ կամուրջները։ Պրայիլա, Կալաց և այլ քաղաքներ հարստացած են։ Կարոլ թագաւորն երկրին կրթական և գրականական զարգացման կարևորագոյն դործին մէջ մեծ ալակից ունեցած է իւր ամուսինն զմեծադուհին Եղիսաբեթ, որ՝ ինչպէս հանրածանօթ է, դերահրաշակալ է իբրև դրադէտ, բանաստեղծ, հանճարեղ և իմաստասէր։ Ահա այս վիճակին է պատճառ, որ ժողովրդեան ամէն դասուց կողմանէ խորին գոհունակութիւն և չնորհակալութեան ուղերձներ ուղղեցան առ արքայն Կարոլ՝ իւր յորելեանի առթիւ, և ամէն ուրեք ուրախութեան հանդէսներ կատարուեցան։

— Ռուսիոյ կայսրն, տարուդ վերջերը ի Բոբէնհակ իւր ամառնանիստեան բառորդդարեան տարեդարձը տօնելէ առքը՝ ի Պերլին պիտի այցելէ առ կայսրն Գերմանիոյ։

— Սերպիոյ ելմտից նախարար Պ. Վուիչ ի Պետրսպուրկ կարևոր տեսակցութիւններ ըրեր է Ռուսիոյ արտաքին դործոց նախարար Պ. Կիրսի և Գարատագի իշխանի հետ։ Պ. Կիրս խորհուրդ տուեր է որ Սերպիոյ կառավարութիւնը փոյթ տանի մանաւանդ Բ. Դրան հետ բարեկամական յարաբերութիւններն հաստատուն պահելու համար։

— Պէրլինէ կը հաւատան թէ՝ Գերմանիոյ, Աւստրիոյ և Իտալիոյ կառավարութեանց դաշնակցութիւնը պիտի վերանորոգէ, որոշեալ պայմանաժամը լրանալէ յառաջ։

— Ռուսիոյ կայսրը, դահաժառանդ որդւոյն Ճարտնէ ի Միսկերիա ժամանման առթիւ, անդ աքսորելոյ բաղմաց սահմանեալ պատիժները թեթևցուցեր, և որդւոյն պատուիրեր է ծանուցանել թէ ղմիպերիա բուն Ռուսիոյ հետ երկաթուղեաւ կապելու դիտաւորութիւն ունի։

— Դաղղիոյ նախարարապետ և ղինուորական գործոց նախարար Պ. Ֆրէյսինէ հրաժարադիր մատուցեր է, բայց ապա յորդորանօք նախագահին յանձն առեր է շարունակել պաշտօնը։

— Մարոդի կառավարութիւնն որոշեր է՝ դաղղիական դրամոյ համամման դրամ կոխել տալ ի Փարիզ։

— Միացեալ Նահանգաց հանրապետութեան նախագահ Պ. Հանիսըն՝ գրեթէ բովանդակ երկրին ամսոյ մը չափ ժամանակ շրջագայելէ և բաղմաց տաճնախօսութիւններ ընդունէ ետքը վերադարձաւ ի Վաշինկթըն։ Ընդհանուր կարծիք է թէ այս շրջագայութեան դլխաւոր նպատակն էր՝ ժողովուրդն յինքն յանկուցանել իւր վերընտրութեան համար ի պաշտօն նախագահութեան, և թէ՝ վստահ է յաջողութեան վերայ։

— Վիէննայի օսմանեան դեսպան Զիյա, խորհրդական Նասրի և զինուորական կցորդ-փոստ պէյերն անցեալ չաբաթ երեկոյ պատրաստակեր է թէ՝ Ամերիկայի Տագօթայ Նահանգի հիւսիսային կողմը 7200000 հեկտար գետին դաղթականաց յատկացեալ է։

— Ի Լոնտոն, ըստ վիճակադրութեան կառավարութեան, անցեալ տարի 31 հոդի մեռեր են անօթութենէ։

— Ռուսիոյ Վիլնա նահանգի կեդրոն համանուն քաղաքին մէջ հրդեհ պատահելով՝ 400 տուն այրեցաւեր եղեր և 2 հոդի այրեր են։

— Գերմանիոյ Գրուբի դործարանի նախորդ դործակալն ի կ. Պոլիս՝ Պ. Վինքլէր սպաններ է ինքզինքն։

— Ձաթունի կայսրն ուղեր է յատուկ պատուիրակներ դրկել ի Պետրսպուրկ՝ ծանուցեալ դեպքին վերայ ցաւ յայտնելու համար, սակայն Ռուսիոյ կայսրը բաւական համարեր է արդէն եղած յայտարարութիւններն։

— Ի Փարիզ անցեալ ուրբաթ ուժգին փոթորիկ մը պատահելով, կարկտախառն անձրև տեղացեր, պալատական դարաստանաց հինաւուրց ծառեր կործաներ, և ի Պուտո բաղմաթիւ մարդիկ վիրաւորուեր են։

— Ամերիկայի մէջ վեց երիտասարդք սիրահարելով հրաշադեղ օրիորդի մը, իւրաքանչիւրն սկսեր են ջանասիրաբար լինել ընտրելի յանկուցանելու համար, և այս մրցումն այնչափ սաստկացեր է, որ վեց երիտասարդք կըռուի բռնուելով՝ երեքը չարաչար վիրաւորուեր են։

— Ի Նանքինկ (Չինաստան) ամբոխն քրիստոնէից տուներն խուժեր կողոպտեր է։ Մեթոտեան բողոքական վարժարանն հրկիզեր և աւերեր է։ Անգղիական մարտանաւ մը գնացեր և չինական դինուորք զրկուեր են։

— Ի Տճօնքերք (Հիւսիսային Դաղղիա) քարիւղի չոեմարան մը պայթեր, 7 տուն այրեր, 10 հոգի բոցերուն մէջ անհետացեր և բազում վիրաւորուեր են։

— Ամերիկայի մէջ անքուն մնալու համար տարօրինակ մրցումներ սկսած են վերջին օրերս։ Ի Սան Ֆրանչիսքօ 17 հոդի մասնակցեր են այս մրցման, բայց միայն մէկին՝ Վոթֆօր անուն, կրցեր է անքուն մնալ մինչև որոշեալ աւուրց վերջը, և չահեր է մրցանակը, սակայն քիչ մնացեր է որ խելքը պիտի կորնչուցնէ եղեր։ Ամսոյս 13 ժամ և 43 վայրկեան չէ քնացեր։ Առած մրցանակն է 100 անգղիական լիրա։

— Ամսոյս 13ին ի Լոնտոն և շրջակայքը ահագին փոթորիկ մը եղնելով՝ խոշոր կարկուտ տեղացեր, և բաղում վնասուց պատճառ եղեր է։

— Պոմպայէն դրուած է թէ՝ Պելճիոյ հռչակաւոր ծովակալներէն Ֆրէմենթէլ՝ թիկնապահի մը և քանի մը գինուորաց հետ եղեր է փիղ որսալ, և փղոց վոհմակի մը պատահելով՝ զարկեր վիրաւորեր է փիղ մը. և թէ՝ վիրաւորեալին ձագն՝ որ վոհմակին մէջ է եղեր, մօրն իյնալը տեսնելուն պէս ծովակալին վերայ յարձակեր, և նա հրացանն ուղղեր է, բայց փամփուշտները պայթելով՝ ինքը ծովակալն չարաչար վիրաւորուեր, և մերձակայ քաղաքը փոխադրուեր է։

= Գաղղիոյ ազգային ժողովը որոշեց՝ մինչև 6 ֆրանք զեղչել ցորենի մաքսն։

= Վերջին քանի մը ամսոց մէջ Նիւ Եորքէ յԵւրոպա 35 միլիոն տոլարի ոսկի ղրկուած է։ Եւ կրկին լրագրաց ոմանք այսչափ ոսկի դուրս հանելուն դէմ դիտողութիւններ հրատարակած լինելով, փողերանոցին վերատեսուչն յայտարարեր է թէ՝ ի Միացեալ Նահանգս գտնուած ոսկիին չափ աշխարհի և ո՛չ կողմը կը գտնուի, և թէ՝ Ամերիկայէ մեծաքանակ ցորեն արտածուելով, փոխարէնը ոսկի պիտի առնըուի, արտածական ոսկիէն աւելի։

= Իտալիոյ Ազգային Ժողովոյ անդամներէն և Սիկիլիոյ արհեստագէտներէն Ինեսսիս Ֆլօրիս անուն անձ մը մեռերս մեռնելով 53 տարեկան հասակին մէջ, 140 միլիոն ֆրանքի չափ հարստութիւն թողեր է։ 1883 ին ընտրուելեր է անդամ Ազգային Ժողովոյ, բայց չատ անդամ բացակայ կըգտնուի, և իւր գործերով կըզբաղի եղեր։

= Ամերիկայի Մէքսիկօ քաղաքի մերձակայ գիւղի մը մէջ ուժգին փոթորիկ մը պատահելով՝ բաղում բնակարանք կործաններ և 17 հոգի մեռեր են։

= Փարիզի լրագիրք գրեր են թէ՝ Պէրլինի օսմանեան դեսպանատան պաշտօնեայներէն օսմանցի սպայ մը պարտէզի մը մէջ պարտէզու ատեն, յանկարծ յաղթանդամ մարդ մը դէմն ելլելով մարք մը խնդրեր է հայ առնըլու համար, և սպայն տուեր է. սակայն մարդը տեսնելով նորա քսակին լիութիւնն, սպառնական կերպարանօք 20 մարք ալ պահանջեր է, և երբ սպայն չկրնար